

ՎՐԴԱԿԱՆ

ԲԱՐԱՆ ==

ՓԻՆԱԶԻ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹ

Արամյան Հովհաննես

№ 1

ԹԻՖԼԻՍ

Տպարան «ՀՆՐԱՆ» Գրաֆսկայիա փող. 6.

1911

Ա. 3.

193

Ա.Ճ.
193

0

2012



ՓԻՆԱԶԻ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻՍԹ

№ 9

Ա.ԻՑ ԵՐԱՆՆԻՍՏԱՆԻ

1960

ՆՈՐ - ԶՈՒՆԱ

ԹԻՖԼԻՍ

Տպարան «ԷՆՐՄՆՍ» Գրաֆսկայիա փող. 6.

1911



Գինը ճեղ կոպ.

2010

5102

ՓԻՆԱՅԻՓ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

№ 8

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

193-2012
106437-Ա2

(1280-2009)



Լինում է, չէ լինում մի փինաչի¹⁾: Փինաչու
արհեստը յայտնի է թէ ինչ է. օրական լաւ
փինաչին ինչքան էլ աշխատի, մի երկու արասի
փող հազիւ կարողանայ աշխատել: Բայց այդ
մեր փինաչին հէնց բնաւ փող դատելու հետ
գլուխ չունէր տնաշէնը. չէ թէ չէր կարող, այլ
չէր ուզում ամենեւին իր մշտական բաժնից
աւելի փող վեր ունել օրական. իսկ այդ բաժինը,
ի՞նչ էր կարծում, ընդամենը մի արասի էր:

Որ վիզը կտրէիր՝ դրանից աւելի փող չէր
գնի նա գոպանը: Ինքն էր մի կնիկ. օրուան
վաստակած մի արասուն առնում էր մի շահու

¹⁾ Կօշիկ կարկասող

հաց, մի շահու միս, երկու շահու էլ գինի ու քէֆը տեղը տուն էր շտապում: Կնիկը վեր էր կենում, ձեռաց միսը խորովում, սուփրան բաց անում ու հացի էին նստում, ուտում խմում, քէֆ քաշում:

Մի դափ էլ ունէին, որ մարդն ածում էր՝ կնիկը պար գալիս, կնիկը դմբդմբացնում էր՝ մարդը պար գալիս: Յետոյ որ քնելու ժամանակըն էր գալիս՝ իրանք էին, մի երկու կտոր խսիր, առնում էին տակները քցում դռշակի տեղ ու մի երկու հաստ ձող՝ որ բարձի փոխարէն գլխատակներն էին դնում. այդպէս անուշ անուշ քնում էին, վեր կենում, Աստծուն փառք տալիս: Առաւօտներն էլի մարդը իր դազգեան-մազգեան, բիզ ասեղ վեր էր ունում, գնում իր բանին, կնիկը մտում էր տանը մինչև մարդու գալը: Փինաչին էլ այն է իր գործը գիտէր. հէնց մի աբասին լրացնում էր թէ չէ, դազգեան մազգեան հաւաքում էր, գինին ու այնոյինն առնում, տուն գալիս ու քէֆը նորից սարքում:

* * *

Այդ երկրի թագաւորն էլ մի շատ խաղաղասէր ու հանդարտ մարդ էր ու շատ էր ուզում, որ իր քաղաքումը ոչինչ անկարգութիւն, աղմուկ չը լինի: Հէնց այս պատճառով մի մին գիշերները, շորերը փոխած, իր նազիր վեզրի հետ դուրս էր գալիս փողոցները ման գալիս, տեսնէ թէ բոլորը քնած են ու աղմուկ, գողգողոց չկայ քաղաքումը:


Մի այսպիսի գիշեր, երբ էլի թագաւորը դուրս է գալիս, ինչ է տեսնէ թէ հանդարտ է քաղաքը թէ չէ, շատ դէս ու դէն ման գալուց յետոյ, յանկարծ մի դմբդմբոց է ականջովը ընկնում:

— Դափի ձայն է, ասում է նազիր վեզրին, — մի գնանք տեսնենք այս ի՞նչ բան է, ո՞վ է այս կէս գիշերին աղմուկ անում: Գալիս են այդ ձայնին մի խուլ փողոց, տեսնում են որ մի բոսոտ տանից է գալիս ձայնը: Դուռը ծեծում են. մեր փինաչին դուրս է գալիս:

— Ի՞նչ էք ուզում, եղբայրացու:

— Հիւր չէ՞ք ընդունի:

— Ա՛յ մեր աչքի վրայ, մեր գլխի վրայ:



Համեցէք, ներս համեցէք. Աստծու տուածից դուք էլ վայելեցէք, մենք էլ: Ինչ ունենք չունենք ձերն է. մեր տունը ձեզ փէշքաշ:

Թագաւորն ու նազիր վեզիրը մի աչք ածեցին ինչ կար չկար փինաչու տանը, մնացին բերանները բաց. իրար երեսին են նայում զարմացած ու ճարները կտրած նստում են նրանց կողքին ու նրանց հետ սկսում են ասել խօսին ու քէֆ անելը:

— Է՛հ, բարեկամ, ինչպէս տեսնում եմ, բաններդ Աստուծով աջ է գնում որ այդպէս ուրախութիւն էք անում, քէֆ բաշում:

— Է՛հ, կանք էլի. Աստծու տուածովն ապրում ենք, կառավարում:

— Բա՛ արհեստիդ անունն ի՛նչ է:

— Ես փինաչի եմ բազարի դրանը:

— Է՛, շատ է գալիս օրական, հարցնելն ամօթ չլինի:

— Շատ ու քիչ չեմ իմանում, միայն իմ բաժինն է օրական մի արասի. մի շահուն հաց եմ առնում, մի շահուն միս, երկու շահուն գի-

նի ու ամեն օր այսպէս մարդ ու կնիկ քէֆ ուրախութիւն ենք անում:

Վերջը՝ երբ որ քնելու ժամանակը եկաւ, փինաչու կնիկը խօսին ու փայտերը բերեց բացեց հիւրերի համար ու իրանք մարդ ու կնիկ գնացին տան մի անկիւնումը կուչ եկան ու այնպէս քնեցին մինչև առաւօտ: Լոյսը դեռ չբացուած՝ փինաչու հիւրերը վեր կացան, շնորհակալութիւն արին ու գնացին իրանց բանին:

Թագաւորը շատ էր զարմացել փինաչու այդ տեսակ ապրուստի վրայ. ուղեցաւ փորձէ տեսնէ թէ՛ ինչպէս ախար այդ քոսոտ պլուդ¹⁾ փինաչին պէտք է ամեն օր քէֆ անէ, եթէ չկարողանայ իր մի արասին ճարել:

* * *

Միւս օրը Թագաւորիցը հրաման դուրս եկաւ որ ոչ մի փինաչի էլ չբանէ բազարի դրանը:

Մեր խեղճ փինաչու օրը շան օր էր. մնացել էր քշուած շուարած թէ՛ որտեղից պէտք է հացի փող գտնէ այդ օրը: Գնաց խեղճը վիզը ծռած

¹⁾ Աղբատ.

ու փոնչու գուքանիցը որ նոր հացի անուշ հոտը քթովը չդիպաւ, սիրտը գնաց յետ եկաւ. կամաց կամաց եկաւ ու գլուխը քաշ քցած փռի առաջին կանգնեց: Փոնչին տաք տաք բոքոնները որ չէր դուրս հանում փռիցը ու մի կողմը շարտում, խեղճի բերանի թուրը գնում էր: Փոնչին այնպէս իմացաւ թէ աղքատ է, ողորմութիւն է ուզում, մի կտոր հաց կտրեց ինչ է իրան տայ, բայց փինաչին ասաց որ ողորմութիւն չէ խընդրում, ուզում է գործի մտնէ նրա մօտը թէ որ կ'ընդունի: «Լաւ, ասում է փոնչին, ամիսը այսքան մանէթ կը տամ, արի բան արա»:

—Չէ, ասում է, ինձ օրական մի շահու հաց տուր, երեք շահի էլ փող:

Փոնչին համաձայն եղաւ ու մեր փինաչին աշխարհըովը մին եղած տուն վազեց.

—Ա՛ կնիկ, քէֆդ տեղը պահիր. թագաւորի կ'ընչն ասեմ, ուզեցաւ մեր հացը կտրէ, բայց չէր իմանում որ մենակ փինաչու թիւնով չեն մարդիկ փող աշխատում: Հիմա մի փոնչու մօտ եմ բանում. քէֆ արա, ուրախացիր, էլի մեր օրական գինին, հացն ու միսը կայ ու կայ:

*
* *

Այս գիշեր էլի թագաւորը իր նազիր վեզրի հետ դուրս է գալիս ման գալու քաղաքը ու գալիս է որ տեսնէ թէ փինաչին ինչ օրի է, որ ինքը իրաւունք չէ տուել էլ փինաչիները բազարի դրանը բանեն: Գալիս է տեսնում էլի առաջուան պէս մարդ ուկնիկ գինին, խորովածը դրել են առաջներն ու դափը ձեռներն առել: էլի «բարով, Աստու բարին» ասում են ու ամեն մարդ իր տեղը նստում:

— Փինաչի եղբայր, մենք լսել ենք որ թագաւորը հրաման է հանել որ էլ փինաչի չը բանէ բազարի դրանը. դու ձրտեղից ես ախար այս այնոյինը ճարել:

—Ը՛հ, տօ որ թագաւորը խելք ունենար, այդպէս հրաման կը տար: էլ ուրիշ գործ կարուէլ էր գլխներիցս. հիմա փոնչու մօտի բանում եմ ու էլի իմ հացի, մսի ու գինու փողն առնում, ուտում խմում, ուրախանում:

Թագաւորը մնացել էր բոլորովին զարմացած փինաչու վրայ. մտքումը դրեց ինչպէս որ լինի դրան մի նեղը լծէ, տեսնէ ինչպէս պէտք է սազուլու պահէ, որ օրը դատում է, օրն ուտում,

էգուցուայ վրայ ամեններն միտք չէ անում: Ասելն ու անելը մէկ է լինում. հէնց հետեւեալ օրը ուղարկում է կանչում փինաչուն: Փինաչին՝ դողն ընկնում է ջանք, վախվախելով գալիս է, թագաւորին գլուխ տալիս, առաջին կանգնում:

— Ես լսել եմ որ դու մի շատ քաջ, խելօք, հաւատարիմ մարդ ես, ուզում եմ քեզ մի պաշտօն տամ որ միշտ առաջիս լինիս ու իմ ասածը կատարես: Ահա սա այս թուրը ու այստեղ կաց որ ում գլուխն ասեմ ձեռաց կտրես: Դու ինձանից անբաժան կը լինիս ու լաւ ոտճիկ կ'ստանաս:

— Թագաւորն ապրած կենայ, քր ծառան եմ, ինչ ասես՝ պիտի լսեմ. բայց որ գլուխս թոցնիլ տաս այս ըոպէին, այդ չեմ կարող անել, կամքը քոնն է, թագաւորն ապրած կենայ: Չեմ ուզում քո տուած ոտճիկը. այդ նրան տուր, ով ինձանից աւելի է արժանի այդ պատուին. իսկ ես միայն մի բան եմ ինկրում ու այդ պայմանովն եմ յանձն առնում քո տուած պաշտօնը. ինձ օրական մենակ մի աբասի տուր ու ամեն երեկոյ բաց թող գնամ իմ տունը:

— Դէ թէ որ շատ ես դէմ ընկնում, ամեն օր

տուն կ'արձակեմ քեզ, բայց ուղածդ աբասին չեմ տայ. փողդ միշտ ամսագլխին կ'ստանաս:


Փինաչին ճարահատած պէտք է լսէր. բայց ինչ խեղճի օրն էր, Աստուած իմ թշնամունցոյց չտայ: Գժի պէս այս կողմ այն կողմն էր ընկնում, չէր իմանում ի՞նչ անէ, սրտեղից օրուան ապրուստ ճարէ: Վերջապէս մի բան ընկաւ միտը, ինչպէս որ երկնքից մի լոյս ծագեց նրա համար. գնաց ուղիղ մի զինագործի մօտ, թուրը հանեց տուեց իրան—

— Ա՛յ այս թուրը քեզ գրաւ, գրա տեղը մի հատ այդպէսը շինիր փայտից, տուր ինձ տեղը դնեմ ու ինձ օրական մի աբասի փող տուր մինչև ամսի վերջը:

Թագաւորի տուած թուրը անխօս դրեց գրաւ, փողն առաւ ու վեր կացաւ եկաւ էլի տուն, իր քէֆն սկսեց:

* * *

Գիշերուան մի ժամանակը թագաւորն էլի դուրս է գալիս նազիր վեզրի հետ, գայ տեսնէ ինչ է անում փինաչին:



Հիմա դու արի տես թագաւորի զարմանքը, երբ էլի փինաչու դափի ձայնը ականջն է ընկնում: Գալիս է փինաչու դուռը ծեծում, ներս մտնում:

—Բարի իրիկուն:

—Հայ Աստծու բարին, իմ ազիզ հիւրեր, համեցէք:

—Է՛, փինաչի եղբայր, աչքդ լոյս, շնորհաւոր նոր պաշտօնդ. ողջ քաղաքը քո անունն է տալիս, թագաւորը քեզ այդպէս սիրեց, մեծացրեց, այդպիսի պատուի արժանացրեց:

—Ը՛հ, ես թագաւորի այսպէսն ու այնպէսը —ասում է փինաչին, առանց կասկածելու բնաւ թէ թագաւորն ինքն է հետը խօսողը—պատիժ, ի՞նչ պատիւ: Ի՞նչ արի չարի՛ փողն էլի ասաց որ ամսագլխին պիտի տայ: Դէ արի էշը ցխիցը հանիր: Ի՞նչ անեմ, ի՞նչ չանեմ, ճրտեղից մի աբասին ձարեմ—էլ երկար ու բարակ միտք չարի ու ուղիղ գէպի մի զինագործի դուքան. թուրս գրաւ դրի, փողն առայ ու տեղն էլ անա այս փայտէ թուրը շինել տուի որ թագաւորը չիմանայ:

Թագաւորն ապշած մին նազիր վեզրին էր նայում, մին փինաչուն էր ականջ անում: Վերջն էլի զիշերը մնացին նրան հիւր ու լուսաբացին էլ յետ եկան տուն:

* * *

Հէնց այդ օրը թագաւորը կանչեց փինաչուն ու ասաց:

—Այսօր դու քո շնորհքը պիտի ցոյց տաս: Ի՛է գնա փողոց ու ում որ առաջինը կը պատահես, բեր այստեղ ու իմ առաջին գլուխը կտրիր, տեսնեմ ինչպէս ես պաշտօնդ կատարում:

Փինաչին, խեղճ փինաչին, հնուդողը ջանն ընկած, երեսի գոյնը բցած, վիղը ծռած դուրս եկաւ ու երկու ոտ չփոխած մի ալևոր մարդու պատահեց, որ հանդարտ իր ճանապարհն էր գնում:

—Բարի, թագաւորը քեզ կանչում է, արի գնանք:

Այդ ալևորի թուրումունքն էլ այդտեղ կպաւ, ծնկները ծալուեցան ու խեղճ խեղճ եկաւ թա-

գաւորի առաջին չօքեց, գլուխ տուեց ու սպասում էր նրա հրամանին:

— Դէ դրա գլուխը կտրիր այս բոպէին:

Փինաչին իրան մի թափ տուեց, սիրտ առաւ ու դարձաւ թագաւորին ասաց:

— Թագաւորն ապրած կենայ, քո հրամանը հրաման է, պէտք է կատարուի, բայց այս խեղճ ալևորը ինչ մեղ ունի ախար որ դու առանց հարց ու փորձի, անդատաստան անբան ուղղում ես գլուխը կտրել տաս:

— Դու թէ պիտի կատարես պաշտօնդ՝ կատարիր, թէ չէ այս բոպէին քո գլուխը թոցնել կը տամ:

— Իրաւունք ունիս, թագաւորն ապրած կենայ. բայց էլի եմ ասում որ այս մարդն անմեղ է: Թէ իմ ասածը սուտ է, ինձ սրա տեղակ սպանել տո՛ւր. թէ ճշմարիտ է, թագաւորն ապրած կենայ, թէ այս մարդը արդար է, ձեռաց իմ թուրը փայտ կը դառնայ:

Ասաց ու համարձակ հանեց թուրը, ցոյց տուեց բոլորին:

Թագաւորը փինաչու այդ ճարպիկութիւնը որ տեսաւ՝ շատ ընծայ տուեց նրան ու ճանապարհ դրեց որ գնայ, էլի ինչ արհեստ ուղղում է բանացնէ:

Աստուածանից երեք խնձոր ընկաւ. մէկն ասողին, մէկն ասել տուողին, մէկն էլ ականջ զնողին:



ՄԶ

500

Handwritten text in Armenian script, mostly illegible due to fading and bleed-through from the reverse side.

Handwritten text in Armenian script on the red paper, mostly illegible due to fading and bleed-through from the reverse side.



ՍԻՅՈՒՆ
ՅՈՒՆԱՆՆԻՍԵԱՆ
1960
ՆՈՐ - ԶՈՒՂԱ

ՀՀ Ազգային գրադարան

NL0153048

ՓՈՂՈՎՐՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀՐԱՏԱՐԱՎՈՒԹՅՈՒՆ «ՉՈՐՍ ԳՈՅՐԵՐԻ»

- № 1. Փինաչի հեքիաթ 1 կոպ.
- № 2. Կերմօնաով. Աշըղ-Ղարիբ. հեքիաթ

Գրմել՝ Тифлисъ, Книжный магазинъ „ГИРЪ“
Седраку Аветянь.

Handwritten text in Armenian script, likely a library stamp or note, partially obscured by a yellow stain at the bottom.